ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N 13-Ն 08.12.2011թ.

2011 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մրգանուշ համայնքի 2011թ-ի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից տալ՝

1. 4112 հոդվածին 478.0հազ.դրամ [illegible] ծառայությունների պարգևատրման համար:
2. 4131 հոդվածին 95.0 հազ.դրամ սոց վճար:

Ավագանու անդամներ՝

Տ.Ալեքսանյան կողմ

Ա.Այվազյան կողմ

Ս.Սահակյան կողմ

Վ.Միքայելյան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N 14-Ն 08.12.2011թ.

2012Թ-Ի ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական տուրքերի և վճարների մասին “Հայաստանի հանրապետության օրենքի և " Տեղական ինքնակառավարման մասին” օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝ ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել համայնքի 2012թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

1)Մինչև 300քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական օբյեկտների համար 7500 դրամ։
2)Սույն կետի <<1)>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ;

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ;

գ. 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ ։

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ;

4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000դրամ;

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,արդիականացման աշխատանքների բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների այդ թվում ստորգետնյա հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ։

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման,վերակազմման կամ արդիականացմ աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով։

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը։

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինարարությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դ.։

<<1.>>,<<2.>>,<<3.>>կետերի համար կիրառել 0.5 գործակիցը։

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1)ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1000 դրամ:

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5.Համայնքի տարածքում

1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:

2) հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվությ
համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 150000դրամ:

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրային այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
   1000դրամ:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթների և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար՝ 1000դրամ:

Ավագանու անդամներ՝

Ց.Ալեքսանյան կողմ
Ս.Այվազյան կողմ
Ա.Սահակյան կողմ
Կ.Միրզաբեկյան կողմ

Համայնքի ղեկավար Մ.Սարգսյան